ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
Հող.՝ 060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

ՖԱՍԹ ԲԻԼԴ ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՆԱՐԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

N 086-741
21 ապրիլ 2023թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

08.07.2022 թվականին կնքված ԱՄԽՀ-ԳՀԱՊՁԲ-22/11-2 ծածկագրով պայմանագրը միակողմանի լուծելու մասին.

Խոյի համայնքապետարանը (այսուհետ՝ Գնորդ) «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2022 թվականի Հուլիսի 8-ին կնքվել է Խոյի համայնքապետարանի կարիքների համար կենցաղային և տնտեսական ապրանքների մատակարարման պայմանագիր: Վաճառողը պայմանագրի 1.1 կետի համաձայն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի և հրավերի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ Ապրանք): Վաճառողի կողմից 25.07.2022 թվականին մատակարարված թիվ 79 չափաբաժնի յուղաներկ ապրանքի որակը չի համապատասխանել հրավերի և պայմանագրի տեխնիկական բնութագրին: 28.07.2022 թվականին Գնորդը ծանուցել է Վաճառողին և առաջարկել վերը նշված ապրանքը ողջամիտ ժամկետում պայմանագրի և հրավերի N1 հավելվածով նախատեսված ապրանքով փոխարինելու մասին, սակայն Վաճառողի կողմից ոչ մի քայլ չի ձեռնարկվել: Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված է, որ պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) միակողմանի լուծվում է, եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վաճառողը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Գնորդը որոշում է՝ միակողմանի լրիվ հրաժարվել պայմանագրի 79-րդ չափաբաժնից և տվյալ չափաբաժնի մասով համարել այն լուծված, որի վերաբերյալ ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ (այսուհետ որոշում) հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթների համաձայն սույնով իրականացնում է Վաճառողին պատշաճ ծանուցում: Որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի լուծելու մասին ծանուցումը գնորդը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը և վաճառողը համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրվանից: Միաժամանակ Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը կուղարկի Վաճառողի էլեկտրոնային փոստին: «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի

ա) պարբերության համաձայն մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի մասնակի միկողմանի լուծմանը: Վաճառողից գանձել որակավորման և պայմանագրի ապահովման գումարները: Հավելված 4.2- ով սահմանված որպես որակավորման ապահովում Վաճառողից գանձել 38 400/ երեսունութ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ: Հավելված 5.1- ով սահմանված որպես պայմանագրի ապահովում Վաճառողից գանձել 25 600/քսանհինգ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ: Պայմանագրի և Որակավորման ապահովման գումարները փոխանցել վճարման պահանջագրերի 13-րդ կետում նշված 900322238032 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի տեղակալ Ս. Բեսիկյան